

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

### ՀՀ Արագածոտնի մարզային գեներալային հանձնաժողովի նիստի /16.12.2015թ./

2015թ. դեկտեմբերի 16-ին տեղի ունեցավ ՀՀ Արագածոտնի մարզի գեներալային հանձնաժողովի նիստը: Նիստը նախագահում էր հանձնաժողովի ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ տիկին Նունե Մովսիսյանը:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի անդամներ Գ.Դանիելյանը, Ս.Հովսեփյանը, Ա.Մովսիսյանը, Ա.Զորյանը, Մ.Շահազիզյանը/ Ս.Թադևոսյանի համաձայնությամբ/, Ն.Դավթյանը, Ս.Բարնջյանը, Յու.Ներսիսյանը / Ս.Պետրոսյանի համաձայնությամբ/: Հարգելի պատճառով բացակայում էին 4 անդամ:

Նիստը բացեց հանձնաժողովի նախագահ տ-ին Ն. Մովսիսյանը: Հաստատվեց հանձնաժողովի հետևյալ օրակարգը:

### ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Արագածոտնի մարզի կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնախնդիրներով զբաղվող մարզային հանձնաժողովի 2015թ. աշխատանքային ծրագրի կատարման մասին

/զեկ. հանձնաժողովի քարտուղար, մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի պետ Գ.Դանիելյան/

2. ՀՀ ԱՍՀ նախարարության կողմից մշակված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների իրավիճակային գնահատման մեթոդաբանություն» և սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտների գեներալային ուղղորդման սկզբունքները ծրագրերում ներառելու մասին

/զեկ. զեկ. հանձնաժողովի քարտուղար, մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի պետ Գ.Դանիելյան/

Առաջին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ հանձնաժողովի քարտուղար Գ.Դանիելյանը: Նշվեց, որ 2015թ. աշխատանքային ծրագրով նախատեսված

միջոցառումներ են իրականացվել մարզի համայնքներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ իրազեկման նպատակով: Մարզի 25 դպրոցների ավագ տարիքի դպրոցականներին ներկայացվել են կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումները: Մարզի մշակութային 5 հաստատություններում կազմակերպվել են քննարկումներ «Կանանց և տղամարդկանց դերը ազգային արժեքների պահպանման գործում» թեմայով: «Կանանց դերի բարձրացման կարևորությունը ժողովրդավարական գործընթացներում» թեմայով քննարկումներ են կազմակերպվել տեղական ինքնակառավարման մարմիններում՝ նպատակ հետապնդելով նրանց շարքերում ավելացնել հեղինակավոր կանանց մասնակցությունը: Ներկայացվեց նաև մարզում սեռի հատկանիշով բռնության կանխարգելման 2015 թվականի միջոցառումների տարեկան ծրագրի շրջանակում կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն: Մարզում հասարակական կազմակերպությունների միջոցով՝ ՄԶՄԿ, Սեյվ դը Չիլդրեն, Արմավիրի զարգացման կենտրոն, իրականացվում են «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիրը, որի շրջանակներում անցկացվել են 6 դասընթացներ, ձևավորել է 2 ակտիվ խումբ Աշտարակ և Թալին քաղաքներում, նրանց միջոցով շարունակվում են մարզի տարբեր մասնագետների, կանանց, ընտանիքների հետ բացատրական աշխատանքների կազմակերպումը: Ընթացիկ տարում մարզկենտրոնում բացվել է ԿԻԿ կազմակերպության ճգնաժամային կենտրոն, որի աշխատակիցների միջոցով բռնությունից տուժած կանանց իրավական, հոգեբանական աջակցություն է ցուցաբերվել 17 կնոջ, մեկ կին՝ 3 երեխաների հետ տեղափոխվել է ապաստարան: Հարցի վերաբերյալ ելույթներով, առաջարկություններով հանդես եկան Ս.Հովսեփյանը, Ա.Մովսիսյանը, Մ.Շահազիզյանը: Քննարկման արդյունքներն ամփոփեց հանձնաժողովի նախագահ տ-ին Ն.Մովսիսյանը:

### **Հանձնաժողովը որոշեց.**

- **Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչությանը և ԸԿԵԻ պաշտպանության բաժնին՝**
- 1. Հետևողական աշխատանքներ տանել ՏԻՄ-երի հետ, համայնքների հեղինակավոր կանանց շրջանում՝ առաջադրելու իրենց թեկնածությունը որպես համայնքների ղեկավարներ, ավագանու անդամներ:
- 2. Աշխատանքներ տանել մարզի 10 խոշոր համայնքներում 2016թ. ընթացքում ստեղծելու կանանց և տղամարդկանց իրավահավասարության և հավասար հնարավորությունների հիմնահարցերով զբաղվող հանձնաժողովներ:
- **Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և երիտասարդության վարչությանը՝** կրթական հաստատություններում կանանց և տղամարդկանց իրավահավասարության, այդ մասին ՀՀ կառավարության որոշումները սովորողների, ծնողների շրջանում տարածել,

բարձրացված հարցերին, առաջարկություններին համապատասխան ընթացք տալ:

- Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ոլորտում անհավասարակշռության հարթման նպատակով շարունակել համագործակցել տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ:

**2.** Երկրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ հանձնաժողովի քարտուղար, մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի պետ Գ.Դանիելյանը: Ներկայացվեց ՀՀ ԱՍՀ նախարարության կողմից մշակված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների իրավիճակային գնահատման մեթոդաբանություն» ձեռնարկը, սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտների գենդերային ուղղորդման սկզբունքների մասին հավելվածը: Նշվեց, որ ըստ ոլորտների համայնքներում կարևորվում է իրականացնել գենդերային վերլուծություն, ուսումնասիրություններ կատարել, պարզել գենդերային ճեղքվածքի ցուցանիշները տնտեսության, քաղաքականության, կրթության և առողջապահության առանցքային ոլորտներում: Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների սկզբունքը համարվում է սոցիալական արդարության հասնելու, մարդկային ներուժի արդյունավետ օգտագործման և երկրի, մարզի, համայնքների կայուն զարգացման երաշխիք:

**Ելույթներով** հանդես եկան Ս.Հովսեփյանը, Ն.Դավթյանը, Ա.Մովսիսյանը:

Քննարկման արդյունքներն ամփոփեց հանձնաժողովի նախագահ տ-ին Ն.Մովսիսյանը:

**Հանձնաժողովը որոշեց հանձնարարել.**

- Գ.Դանիելյանին՝ ՀՀ ԱՍՀ նախարարության կողմից մշակված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների իրավիճակային գնահատման մեթոդաբանություն» ձեռնարկը, սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտների գենդերային ուղղորդման սկզբունքների մասին հավելվածը ընդունել որպես գործունեության ուղենիշ, այն տրամադրել հանձնաժողովի բոլոր անդամներին և տեղական ինքնակառավարման մարմիններին:

- Հանձնաժողովի անդամներին՝ մինչև 2016թ. մարտի 1-ը կատարել անհրաժեշտ ուսումնասիրություն իրենց գործունեության համապատասխան բնագավառում, կատարել գենդերային վերլուծություն և ներկայացնել հանձնաժողովին:

**Հանձնաժողովի նախագահ,**

**մարզպետի տեղակալ՝**

**Ն.Մովսիսյան**

**Հանձնաժողովի քարտուղար,**

**Մարզպետարանի աշխատակազմի**

**ԸԿԵԻՊ բաժնի պետ**

**Գ.Դանիելյան**